Էդգար Ավետիսյան
Հայաստանի Եվրոպական Համալսարանի
Իրավագիտության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ edgaravetisyan96@gmail.com
DOI: 10.53614/18294952-2022.2-26

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱՀԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ընդհանուր տեղեկատվության ազատությունը, որը ներկայանում է որպես տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու ազատություն, հանդիսանալով արտահայտվելու ազատության հիմնական իրավունքի մաս՝ ՀՀ Սահմանադրությունում տեղավորվել է կարծիքի արտահայտման ազատության մեջ: Ժամանակակից մարտահրավերներին զուգահեռ օր օրի մեծանում է տեղեկատվության պահանջարկի ու շրջանառության ծավալը, որն առաջացնում է դրանց արժանի իրավական գնահատական տալու հրամայականը:

Մեր կողմից իրականացված ուսումնասիրությամբ անդրադարձ է կատարվել ընդհանուր տեղեկատվության ազատության տեղին ու դերին, դրա ապահովման հայկական սահմանադրահիրավական երաշխիքներին, ինչպես նաև ներկայացվել է այս իրավունքի առանձնահատկությունների ու սահմանափակումների վերաբերյալ որոշ հարցեր:

Հիմնաբառեր. Սահմանադրություն, ընդհանուր տեղեկատվության ազատություն, իրավունք, տեղեկություն, կարծիքի արտահայտում, փաստ, երաշխիք, առանձնահատկություն, իրավունքի սահմանափակում:

Ներածություն

Ժամանակակից աշխարհում տեղեկատվությունը հանդիսանում է մարդու կարևոր պահանջմունքներից մեկը, որի իրավական արտահայտումը, ի թիվս

այլնի, ձևավորում է այնպիսի իրավունք, ինչպիսինն է հենց արտահայտվելու ազատության մեջ ներառվող ընդհանուր տեղեկատվության ազատությունը: Վերջինս ապահովում է տեղեկատվության ցանկացած միջոցով տեղեկությունների փնտրման, ստացման ու տարածման ազատությունը:

Սույն աշխատանքը, նվիրված լինելով ընդհանուր տեղեկատվության ազատության հիմնական իրավունքին, հանձն է առնում բացահայտել դրա ընդհանրական դրսևորումը, սահմանադրահիրավական երաշխիքները, առանձնահատկությունն ու սահմանափակման որոշ հարցերը: Վերջիններիս իրականացումը նպատակադրված է քննարկվող իրավունքի ապահովման ու պաշտպանության որոշ հարցերի վերհանմանն ու դրանց շրջանակում իրավական լուծումներին նպաստող առաջարկների ներկայացմանը:

Ուսումնասիրության մեթոդն ու տեսական հիմքը

Հետազոտությունն իրականացվել է վերլուծության, վերացարկման, ձևական իրավաբանական, իրավահամեմատական մեթոդների կիրառմամբ, իսկ որպես հետազոտության տեսական հիմք հանդես են եկել հայկական և արտասահմանյան գիտական աշխատություններ և ուսումնասիրություններ: Աշխատանքում տեղ են գտել նաև դատական պրակտիկայում բարձր դատարանների հայտնած դիրքորոշումներն ու մոտեցումները՝ որպես փորձառնական հիմք:

Ընդհանուր տեղեկատվության ազատության ընդհանրական բնութագիրը

Տեղեկությունների ազատ հոսքը գտնվում է հենց ժողովրդավարության հասկացության հիմքում (Mendel, 2003, էջ 1): Տեղեկությունների ազատ հոսքն էլ ապահովվում է մարդու այնպիսի իրավունքներով, ինչպիսինն է արտահայտվելու ազատությունը, տեղեկատվության ազատությունը և այլն: Նախապես, անհրաժեշտ համարելով անդրադառնալ ընդհանուր տեղեկատվության ազատության սկզբնական դերին ու նշանակությանը՝ արձանագրենք, որ այն ձևավորվել ու զարգացել է որպես արտահայտվելու ազատության տարր: Արտահայտվելու ազատության ուսմունքը կառուցված է անհատի ազատ ու բանական լինելու հասկացության և արտահայտվելու հասկացության՝ որպես կարծիքի ու տեղեկությունների թափանցիկ հաղորդակցման հիման վրա, որը տեղի է ունենում դեմառդեմ, գրքերի, թերթերի կամ այլ հասանելի լրատվական միջոցներով (Richard, 2000, էջ 5):

Ընդհանուր տեղեկատվության ազատությանը տրված բնորոշումը, համաձայն որի՝ այն հանդիսանում է մարդու հիմնական իրավունք, որն ապահովում է տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը, վկայում է, որ այն, ըստ էության, ընդգրկում է տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի մեծ բաժինը՝ բացառությամբ հանրային մարմիններից տեղեկություններ ստանալու ազատության: Այլ խոսքով՝ ընդհանուր տեղեկատվության ազատութ-

յունը հանդիսանում է ցանկացած տեսակի տեղեկության ազատ շրջանառման երաշխավոր:

Մեր կողմից ներկայացվող ընդհանուր տեղեկատվության ազատությունը ՀՀ-ում արտահայտվում է ՀՀ Սահմանադրության (այսուհետ նաև՝ Սահմանադրություն) 42-րդ հոդվածի շրջանակում, որը երաշխավորում է յուրաքանչյուրի՝ *առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը:*

Ընդհանուր տեղեկատվության ազատության որոշ առանձնահատկություններ

Ընդհանուր տեղեկատվության ազատության (այսուհետ նաև՝ ԸՏԱ) գլխավոր առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն, ընդգրկվելով արտահայտվելու ազատության մեջ և հանդիսանալով տեղեկատվության ազատության որևէ դրսևորում, տարբերվում է դրա մյուս բաղադրատարրիրավունքից՝ կարծիքի արտահայտման ազատությունից: Հաճախ տեսաիրավական մոտեցումները, ինչպես նաև տարբեր պետությունների մայր օրենքները (օրինակ՝ Ալբանիան, Կոլումբիան, Խորվաթիան, Չեխիան, Ֆինլանդիան, Վրաստանը, Հունաստանը, Հունգարիան, Իտալիան, Լատվիան, Լիտվան և այլն), այդ թվում՝ ՀՀ Սահմանադրությունը, ընդհանուր տեղեկատվության ազատությունն ու կարծիքի արտահայտման ազատությունը նույնացնում, ներառում են մեկ իրավունքի մեջ: Մինչդեռ, կարծում ենք, որ ընդհանուր տեղեկատվության ազատությունը հստակ առանձնահատկություններով դրսևորվում է որպես առանձին իրավունք:

ԸՏԱ-ի և կարծիքի արտահայտման ազատության միջև առկա տարբերությունը դրսևորվում է տեղեկության (փաստի) և կարծիքի (գնահատող դատողության) միջև առկա իրավական տարբերություններով: Փաստի և գնահատող դատողության միջև առկա գլխավոր տարբերությունն այն է, որ փաստի առկայությունը կամ բացակայությունը հնարավոր է ապացուցել, մինչդեռ գնահատող դատողությունը ենթակա չէ ապացուցման: Գնահատող դատողության ճշմարտացիության նկատմամբ ապացուցողական պահանջ դնելն ինքնին վնասում է հենց կարծիքի արտահայտման ազատությունը (ՄԻԵԴ-ի վճիռ, 2001, Երուսաղեմն ընդդեմ Ավստրիայի; ՄԻԵԴ-ի վճիռ, 2002, Դիչանդն ու ուրիշներն ընդդեմ Ավստրիայի): Մինչդեռ, գնահատող դատողությունը միշտ չէ, որ ամբողջությամբ ազատված է ապացուցման պահանջից. եթե ապացուցողական դատողության հիմքում դրված են որոշակի փաստեր, ապա վերջիններիս նկատմամբ կարող է ներկայացվել ապացուցման պահանջ (Bychawska-Siniarsk, 2004, էջ 78):

ՀՀ Սահմանադրական դատարանը ևս անդրադարձել է քննարկման առարկային և փաստի ու գնահատող դատողության հարաբերակցությունը ներկայացրել ՀՀ իրավական համակարգում գործող զրպարտության և վի-

րավորանքի ինստիտուտների համատեքստում: Վերջինիս կապակցությամբ հայտնել է՝ միջազգային իրավական պրակտիկայում «վիրավորանք» և «զրպարտություն» որակումների հիմնական տարբերությունն այն է, որ զրպարտության պարագայում խոսքը վերաբերում է դիտավորությամբ կեղծ, իրականությանը չհամապատասխանող փաստերի, փաստացի տվյալների տարածման միջոցով անձի արժանապատվությունն արատավորելուն, նրան հանցանքի կամ զանցանքի մեջ իրականությանը չհամապատասխանող փաստերի հիման վրա մեղադրելուն, իսկ վիրավորանքը ենթադրում է անձի՝ դիտավորությամբ, կանխամտածված նվաստացում: (...) Ընդ որում, գնահատող դատողություն արտահայտելու համար ապացույցներ չեն պահանջվում (ՀՀ Սահմանադրական դատարանի որոշում, 2011, ՍԴՈ-997):

Ստացվում է, որ ԸՏԱ-ն ապահովում է տեղեկության, փաստի, կարծիք չհանդիսացող ցանկացած տեղեկույթի ստացումը, փնտրումն ու տարածումն ապահովող մարդու իրավունք: Մինչդեռ, ՀՀ Սահմանադրությունը ԸՏԱ-ն ներառել է կարծիքի արտահայտման ազատության մեջ, որով, կարծում ենք, անուղղակիորեն նեղացվել ու նվազեցվել է նշված իրավունքի նշանակությունը, այն առումով, որ դրանով չի ապահովվում կարծիք չհանդիսացող ցանկացած այլ տեղեկության ազատությունը: Միաժամանակ, դատական և տեսական մակարդակում արտահայտված մոտեցումները ցույց են տալիս, որ տեղեկության փնտրումը, ստացումն ու տարածումն ամբողջացնող ընդհանուր տեղեկատվության ազատությունը մի շարք հատկություններով դրսևորվում է որպես մարդու առանձին իրավունք, որն առաջացնում է դրա առանձին ուսումնասիրման ու հետազոտման պահանջ: Վերջինիս դրսևորումը այժմ, կարելի է ասել, գտնվում է անցումային փուլում: Մինչդեռ շատ երկրներ, հաշվի առնելով տեղեկությունների նման առատության դարաշրջանի օրհասական մարտահրավերները, տեղեկություն-փաստի փնտրումը, ստացումն ու տարածումը երաշխավորող ընդհանուր տեղեկատվության ազատությունն ընդունում են որպես առանձին իրավունք:

Ընդհանուր տեղեկատվության ազատության սահմանադրաիրավական երաշխիքները

Վերլուծելով ընդհանուր տեղեկատվության ազատության սահմանադրաիրավական նորմը՝ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի առաջին մասը, անհրաժեշտություն է առաջանում մեկնաբանել և վերհանել հոդվածում օգտագործվող այնպիսի ձևակերպում-երաշխիքների էությունը, ինչպիսիք են «առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության», «անկախ պետական սահմաններից», «տեղեկատվության որևէ միջոց», ինչպես նաև «տեղեկություններ փնտրել, ստանալ ու տարածել» երաշխիքները:

Առաջինն անդրադառնալով «առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության» և «անկախ պետական սահմաններից» հիմնական իրավունքն առանձնահատուկ կերպով երաշխավորող

հասկացություններին՝ պետք է նշենք, որ քննարկվող հոդվածում օգտագործվող տվյալ ձևակերպումները միակն են Սահմանադրությունում և նախատեսված չեն ոչ մի այլ հիմնական իրավունքի երաշխավորման համար, ուստի դրանց բնույթի բացահայտումն էլ ավելի կարևոր ու անհրաժեշտ է:

«Առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության» շնորհիվ պետության և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից որևէ միջամտության բացառումը շատ կարևոր երաշխիք է համարվում ընդհանուր տեղեկատվության ազատության համար: Սրանով պետությունն ու տեղական մարմինն ուղղակիորեն ստանձնում են նեգատիվ պարտականություն և անգործություն, որպեսզի մարդն օրենքին չհակասող, իրեն հարմար եղանակով ու կերպով հնարավորություն ունենա իրացնել իր տեղեկատվության ազատության իրավունքը: Ավելին, այս իրավունքի նկատմամբ պետության ցանկացած անօրինական միջամտությունն հղի է ոչ միայն սույն իրավունքի անհիմն սահմանափակման, այլ նաև ժողովրդավարության կարևոր արժեքների վնասման բարձր ռիսկով: Տեղեկատվության ազատության նկատմամբ պետական միջամտության բացառման առանձնահատուկ երաշխիքը, սակայն, չի խոչընդոտում այս ոլորտում (...) հասարակության և պետության օրինական շահերից ելնելով՝ օրենքով որոշ սահմանափակումներ նախատեսելը (ՀՀ Սահմանադրական դատարանի որոշում, 2001, ՍԴՈ-278): Վերջինիս ավելի մանրամասն կանդրադառնանք հաջորդիվ:

Հետաքրքիր է անդրադառնալ «անկախ պետական սահմաններից» ձևակերպմանը, որն ամրագրված է նաև Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում և Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում: Ինչպես նշում է Ջ. Մարթենսը՝ տեղեկատվության այս դարաշրջանում տեղեկությունն ու գաղափարն այլևս չեն կարող «կանգնեցվել» սահմաններում (Martens, 1991, էջ 215): Անկախ պետական սահմաններից ընդհանուր տեղեկատվության ազատության երաշխավորումը անձին իրավունք է տալիս անկախ իր գտնվելու վայրից (պետության ներսում կամ պետությունից դուրս) իրեն հասանելի տեղեկատվական միջոցով իրացնել իր տեղեկատվության ազատության հիմնական իրավունքը: Սա տեղեկատվության ազատության համար հանդիսանում է բավականին ծանրակշիռ երաշխիք՝ հատկապես համացանցի առկայության պայմաններում: Մարդու իրավունքների միջազգային մարմինները սկսել են ճանաչել, որ անկախ պետական սահմանների տեղեկատվության ազատության իրավունքի իրացմամբ պաշտպանության տակ է առնվում տեղեկատվության ազատության հիմնական իրավունքը նաև համացանցի ողջ շրջանակով (Center for democracy & technology, 2011, էջ 10):

Հիմնական իրավունքն՝ ի դեմս ընդհանուր տեղեկատվության ազատության, անկախ պետական սահմաններից երաշխավորելը կարող է առաջացնել որոշակի հարցեր, օրինակ՝ ինչ պետական սահմանների մասին է խոսքը, ինչպե՞ս է ապահովվում նշված հիմնական իրավունքը պետական սահմաններից անդին և այլն: Հաշվի առնելով, որ Սահմանադրությամբ նախատեսվող հիմնական իրավունքի միակ հասցեատերն ու ապահովողը Հայաստա-

նի Հանրապետությունն է, ուստի Սահմանադրությամբ նախատեսված պետական սահմանները, միանշանակ, պետք է վերաբերեն ՀՀ պետական սահմաններին: Ստացվում է, որ պետությունը պետք է իր իրավազորության ներքո գտնվող անձանց համար ապահովի տեղեկությունների փնտրումն ու ստացումն ինչպես ՀՀ-ի սահմաններում գտնվող աղբյուրներից, այնպես էլ ՀՀ-ի սահմաններից դուրս գտնվող աղբյուրներից, ինչպես նաև ապահովի տեղեկությունների տարածումն ինչպես դեպի ՀՀ-ի սահմաններում գտնվող «լսարան», այնպես էլ դեպի ՀՀ-ի սահմաններից դուրս գտնվող «լսարան»: Նման մեկնաբանումն ավելի է հիմնավորում այն մոտեցումը, որ անկախ պետական սահմաններից ընդհանուր տեղեկատվության ազատության երաշխավորումն առավելապես ապահովվում է համացանցի գոյությամբ, որտեղ չկան պետական որևէ սահմաններ:

Միաժամանակ պետք է նշել, որ պետությունը չի կարող ամբողջովին ապահովել քննարկվող հիմնական իրավունքի առանց պետական սահմանների երաշխավորումը, քանի որ ցանկացած պետություն իր պետական սահմաններից անդին որևէ իրավազորություն չունի, ուստի չի կարող ապահովել իր իրավազորության ներքո գտնվող անձանց համար իր պետական սահմաններից դուրս գտնվող աղբյուրների հասանելիությունը, քանի որ դրանք կարող են սահմանափակվել այլ պետությունների կողմից: Միջազգային իրավունքի կողմից ներպետական օրենսդրության նկատմամբ ունեցած «հարգանքը» կարող է վերանայման տեղիք տալ, երբ մի երկրում համացանցի նկատմամբ գրաքննությունն ուղղակիորեն կարող է ոտնահարել այլ երկրներում գտնվող անձանց՝ «առանց սահմանների» տեղեկատվություն «տարածելու» կամ «ստանալու» իրավունքը (Center for democracy & technology, 2011, էջ 3): Ուստի, հաշվի առնելով առանց պետական սահմանների ընդհանուր տեղեկատվության ազատության ապահովման շրջանակում պետության ստանձնած պարտականության անհստակությունը, ինչպես նաև պետության իրավազորության հետ կապված խնդիրների առաջացման հնարավորությունը՝ կարծում ենք, որ պետությունը, որպես հիմնական իրավունքի հասցեատեր, ունակ չէ ամբողջությամբ ապահովել ընդհանուր տեղեկատվության ազատության անկախ պետական սահմաններից երաշխավորումը, ուստի, գտնում ենք, որ «անկախ պետական սահմանների» երաշխիքն իր բնույթով ավելի համապատասխան է միջազգային իրավունքին, որով պետությունը պետք է ստանձնի այդ պարտականությունը որպես միջազգային իրավունքի սուբյեկտ՝ իր պետական սահմանները բաց պահելով ցանկացած տեսակի տեղեկատվական ելք-մուտքի, աղբյուրի համար:

Սահմանադրության քննարկվող հոդվածը նաև ընդգրկում է «տեղեկատվության որևէ միջոց» հասկացությունը, որը, կարծում ենք, իր մեջ ներառում է նաև «անկախ պետական սահմանների» հասկացությունը, քանի որ հոդվածում չի նշվում տեղեկատվական որևէ միջոցի պետական սահմաններից ներս կամ դուրս գտնվելը: «Տեղեկատվության որևէ միջոց»-ի հասկացության բացահայտմանն անդրադառնալիս այն կներկայացնենք քննարկվող հոդվածի երկրորդ մասի համանման ձևակերպման համադրմամբ. Սահմանադ-

ության քննարկվող հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը երաշխավորվում է (...):* Եթե մամուլը, ռադիոն և հեռուստաընկերությունը համարվում են տեղեկատվական միջոցի որոշակի տեսակ, ապա հարց է առաջանում՝ ինչ կարող ենք հասկանալ հոդվածում ձևակերպված «տեղեկատվական որևէ/այլ միջոցների» հասկացության ներքո: Առաջին հայացքից կթվա, որ այն ընդգրկում է բոլոր տեսակի տեղեկատվական միջոցները (այդ թվում՝ համացանց, սոցիալական ցանցեր և այլն), սակայն կարծում ենք, որ օրենսդիրը տեղեկատվական այլ միջոցի տակ, թեև ի նկատի կունենա համացանցն ու սոցիալական ցանցերը, բայց ոչ ողջ ծավալով: Գտնում ենք, որ հոդվածն ապահովում է միայն այն տեղեկատվական միջոցների ընդհանուր տեղեկատվության ազատությունը, որոնք ճանաչված (գրանցված) են պետության կողմից որպես այդպիսին: Օրինակ՝ եթե պետական գրանցում ունեցող որևէ լրատվական կայք իր հոդվածները տարածում է տարբեր սոցիալական ցանցերով, ապա այստեղ կգործի հոդվածի «տեղեկատվական որևէ/այլ միջոց»-ը՝ համացանցի իմաստով:

Ինչպես տեսնում ենք, տեղեկատվության ազատության հիմնական իրավունքը կարող է դրսևորվել երեք ակտով՝ տեղեկություններ փնտրելով, ստանալով, տարածելով: *Փնտրելը* իրականացվում է անհրաժեշտ տեղեկույթի ստացմանն ուղղված գործողությունների կատարմամբ, երբ հայտնի չէ դրա գտնվելու վայրը: *Ստանալը* տեղեկույթի գտնվելու վայրն արդեն իսկ հայտնի լինելու պայմաններում տնօրինողից դրա (տեղեկության) փոխանցումն է շահագրգիռ անձին, իսկ *տարածումը* գործողություն է՝ ուղղված տեղեկույթը ստացողների քանակի ավելացմանը:

Ընդհանուր տեղեկատվության ազատությունը ներկայացնելով արտահայտվելու ազատության հիմնական իրավունքի դիտակետից՝ տեսության մեջ նաև հետաքրքիր մոտեցում կա, համաձայն որի՝ արտահայտվելու ազատության իրավունքը պատկանում է «լսարանին», այլ ոչ թե «բանախոսին»: Նման մոտեցման կողմնակիցները հակակշռում են ընդհանուր տեղեկատվության ազատության դրսևորման երեք ձևերի՝ տեղեկություն փնտրելու, ստանալու և տարածելու հավասարությունը՝ դրանցում առավելություն տալով տեղեկություն ստանալու ազատությանը (Alexander, 2005, էջ 9): Կարծում ենք, որ նման մոտեցումը կարող է վտանգավոր լինել տեղեկատվության ազատության իրավունքի երաշխավորման համար, քանի որ այն ամբողջանում է տեղեկություն փնտրելու, ստանալու և տարածելու իրավունքների համակարգում: Մյուս կողմից էլ՝ տեղեկություն ստանալու իրավունքին՝ ի հաշիվ տեղեկություն տարածելու իրավունքի առավելություն տալը կարող է խնդրահարույց դարձնել հենց «լսարանի» տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանությունը, քանի որ վերջինս չի կարող ամբողջությամբ կանխատեսել «տարածման ենթակա» տեղեկության շրջանակը:

Ի տարբերություն ՀՀ Սահմանադրության՝ Ռուսաստանի Դաշնության սահմանադրությամբ տեղեկատվության ազատությունը դրսևորվում է տեղեկություններ փնտրելով, ստանալով, *փոխանցելով, արտադրելով* և տա-

րածելով (նույն դրսևորումներն է ներկայացված նաև Ադրբեջանի Հանրապետության սահմանադրությունում): Եթե ՀՀ Սահմանադրությունը չի նշում տեղեկություններ «փոխանցել» և «արտադրել» հասկացությունները, դա դեռ չի նշանակում, որ դրանք չեն երաշխավորվում: Վերջիններիս տարբերությունը, կարծում ենք, ծավալային բնույթ ունի. այսինքն՝ «տարածելը» կարող ենք հասկանալ ավելի մեծ շրջանակի, հանրությանը ներկայացնելը, ցանկանալ, որ շատ մարդկանց հասու լինի, մինչդեռ «փոխանցելու» դեպքում այն կարող է դրսևորվել միայն մեկ կամ երկու սուբյեկտի հասցնելով, չցանկանալով շատ սուբյեկտների հասու դարձնել: Կարծում ենք՝ ՀՀ Սահմանադրությունում «փոխանցել» հասկացությունն ընդգրկվում է «տարածել» հասկացության մեջ, դրանով իսկ երաշխավորելով նաև տեղեկություններ փոխանցելու ազատությունը: Ինչ վերաբերում է տեղեկություններ արտադրելուն, ապա գտնում ենք, որ այն ևս կարող է տեղավորվել «տարածել» հասկացության մեջ, քանի որ անձը կարող է տարածել ինչպես այլ աղբյուրից ստացված տեղեկությունը, այնպես էլ իր կողմից ստեղծվածը: Եվ, վերջապես, քանի որ տեղեկություն փնտրելը, ստանալը և տարածելը պարտադիր միասնության մեջ չեն և կարող են հանդես գալ առանձին, այսինքն՝ պարտադիր չէ, որ տարածված տեղեկությունը սկզբից «փնտրման և ստացման» փուլերն անցած լինի, նոր տարածվի, այլ կարող է արտահայտվել միայն «տարածվել» ակտով, ապա կեզրակացնենք, որ տարածվող տեղեկությունը կարող է լինել հենց տարածողի արտադրածը՝ ոչ մի տեղից չփնտրված և չստացված:

Վրաստանի Հանրապետության սահմանադրությունը, ի տարբերություն ՀՀ Սահմանադրության, ավելի մանրամասն է ներկայացնում տեղեկատվության ազատության ապահովման եղանակները՝ բանավոր, գրավոր կամ ցանկացած այլ կերպ: ՀՀ Սահմանադրությամբ, կարծում ենք, անհրաժեշտություն չկա հետևել վրացական սահմանադրության նման օրինակին, քանի որ ՀՀ մայր օրենքը հենց 42-րդ հոդվածով ամրագրում է «տեղեկատվության որևէ միջոցով» երաշխիքը, որը, ըստ էության, ավելի ընդգրկուն երաշխիք է տեղեկատվության ազատության ապահովման համար:

Ընդհանուր տեղեկատվության ազատության սահմանափակման որոշ հարցեր

Հիմնական իրավունքի հետազոտումից չի կարող անմասն մնալ դրա նկատմամբ պետության միջամտությունը: Մարդու իրավունքների սահմանափակումը՝ օրինական զսպում է ապօրինի գործողություններից, որով ստեղծվում է բավարար պայմաններ և հնարավորություններ պաշտպանելու հասարակության համընդհանուր շահերն ու հետաքրքրությունները (Малько, 2011, էջ 142): Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները հնարավոր են միայն այն չափով, որքանով դրանք անհրաժեշտ են համապատասխան հասարակական շահերին հետևելու համար: Նշված արժեքների պաշտպանությունն ընդունված է անվանել «իրավաչափ նպա-

տակներ» (Մուրադյան և համահեղինակներ, 2018, էջ 184):

Ընդհանուր տեղեկատվության ազատության սահմանադրական նորմի 3-րդ մասը նշում է, որ այն կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

2005թ.-ի խմբագրությամբ Սահմանադրությունը բոլոր հիմնական իրավունքների (այդ թվում՝ ընդհանուր տեղեկատվության ազատության) սահմանափակման հիմքերը նախատեսում էր մեկ հոդվածում (43-րդ հոդվածով): Ուսումնասիրելով 2005թ.-ի խմբագրությամբ Սահմանադրությամբ և գործող Սահմանադրությամբ նախատեսված հիմնական իրավունքների սահմանափակման հիմքերը, նկատում ենք, որ գործող Սահմանադրությունը տեղեկատվության ազատության սահմանափակման համար հանցագործությունը կանխելը՝ որպես հիմք, չի համարում: Կարծում ենք, որ այս մոտեցումն արդարացված է, քանի որ դժվար է անգամ մտաբերել իրավիճակ, երբ սահմանափակելով տեղեկատվության ազատությունը, կարող ենք հասնել հանցագործության կանխմանը:

Եվրոպական կոնվենցիան ևս սահմանում է տեղեկատվության ազատության սահմանափակման հիմքեր: Միաժամանակ, Եվրոպական դատարանը, ընդգծելով ընդհանուր տեղեկատվության ազատության սահմանափակման նրբանկատությունը, հայտնել է, որ տեղեկությունները «շուտ փչացող ապրանք են», որոնց տարածման սահմանափակումը, թեկուզ կարճ ժամանակահատվածով, կարող է վերջինիս զրկել իր ողջ արժեքից և հետաքրքրությունից (ՄԻԵԴ-ի վճիռ, 1991, Օբզերվերն ու Գուարդիանն ընդդեմ Միացյալ Թագավորության):

Վերադառնալով Եվրոպական կոնվենցիային՝ կարող ենք առանձնացնել ընդհանուր տեղեկատվության ազատության՝ 10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված թույլատրելի սահմանափակումների հիմքերի 3 խմբեր.

1. հասարակական շահերի պաշտպանության համար նախատեսված սահմանափակումներ (ազգային անվտանգության, տարածքային ամբողջականության, հասարակական անվտանգության, առողջության կամ բարոյականության պաշտպանության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու համար),
2. այլոց իրավունքների պաշտպանության համար նախատեսված սահմանափակումներ (հեղինակային, անձնական կյանքի և այլ իրավունքների պաշտպանություն),
3. դատական իշխանության հեղինակության և անկողմնակալության համար անհրաժեշտ սահմանափակումներ:

Սահմանափակումների այս շարքը կարող է խիստ երկար թվալ, բայց պետք է նկատի ունենալ, որ յուրաքանչյուր սահմանափակում կիրառելու համար պետք է առկա լինի 3 կարևորագույն հանգամանք: Եթե դրանցից թեկուզ մեկը խախտվում է, ապա տեղեկատվության ազատության սահմանափակման կիրառումը կհանգեցնի 10-րդ հոդվածի խաթարման: Այսպիսով,

յուրաքանչյուր սահմանափակում պետք է՝ *նախատեսված լինի օրենքով, ունենա օրինական նպատակ* (մասնավորապես 10-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում նշվածներից մեկը), *անհրաժեշտ լինի ժողովրդավարական հասարակությանը վերը նշված նպատակներն իրագործելու համար.* բացարձակ սահմանափակումն անընդունելի է (Դոյդոյան, 2009, էջ 44):

ՀՀ Սահմանադրության հիշյալ հոդվածների համադրված վերլուծությունից հետևում է, որ մարդու արժանապատվությունից՝ ներառյալ պատիվը, բարի համբավը և մասնավոր կյանքը, դրանցից բխող իրավունքները և ազատությունները, որպես բացարձակ իրավունք գործնականում կարող են արդարացնել ընդհանուր տեղեկատվության ազատության սահմանափակումը միայն իրավաչափ շրջանակներում: Այդ մոտեցումն է դրված նաև մարդու իրավունքների պաշտպանությունն ուղղված միջազգային պայմանագրերում:

Եզրակացություն

Ընդհանրացնելով արտահայտվելու ազատության մեջ ներառվող ընդհանուր տեղեկատվության ազատության ինքնահատկությունը՝ արձանագրում ենք, որ ժամանակն է հստակորեն առանձնացնել ու մեկուսի հետազոտել արտահայտվելու ազատության՝ արդեն ինքնուրույն դարձած բաղադրատարրերը, որոնց մեջ իր ուրույն տեղն է զբաղեցնում հենց ընդհանուր տեղեկատվության ազատությունը, իսկ վերոգրյալ իրավանորմերն ու դրանց կապակցությամբ արտահայտված իրավական մոտեցումները հստակ ուրվագծում են տեղեկության (փաստի) ազատությունը երաշխավորող իրավունքը՝ ընդհանուր տեղեկատվության ազատությունը: Կարող ենք արձանագրել նաև, որ ՀՀ մայր օրենքով որոշ չափով նեղացվում է ընդհանուր տեղեկատվության ազատության բուն էությունը, քանի որ այն ներառվել է կարծիքի արտահայտման ազատության մեջ, մինչդեռ ինքը (ԸՏԱ-ն) հանդիսանում է տեղեկություն, փաստ և կարծիք չհանդիսացող ցանկացած այլ տեղեկույթի փնտրման, ստացման ու տարածման ազատությունն ապահովող հիմնական իրավունք:

Ներկայացնելով ընդհանուր տեղեկատվության ազատության սահմանադրական առանձին երաշխիքները՝ ցույց տրվեց դրանց կարևորությունն ու արժեքը, միաժամանակ ընդգծեցինք, որ «անկախ պետական սահմաններից» երաշխիքի ապահովումը կարող է խնդրահարույց լինել այն առումով, որ պետությունը չի կարող ամբողջությամբ ապահովել իր իրավազորության տակ գտնվող պետական սահմաններից անդին գտնվող աղբյուրների հասանելիությունը: Վերջինիս արդյունքում եկանք այն եզրահանգման, որ այս երաշխիքն իր բնույթով ավելի համապատասխան է միջազգային իրավունքին, քան՝ ներպետական:

Ինչ վերաբերում է ԸՏԱ-ի սահմանափակումների ընդհանրական ներկայացմանը՝ ապա հարկ է նշել, որ ԸՏԱ-ն ու դրա սահմանափակումները պետք է դիտարկել ոչ թե փոխադարձաբար բացառիկ շահեր, այլ որպես համարժեք իրավունքներ, քանի որ երկուսն էլ կարևոր և հիմնարար են ժողովրդավարական հասարակության համար: Նշված արժեքների և ընդհանուր տեղե-

կատվության ազատության միջև հակասության լուծման լավագույն տարբերակը, թերևս, այն է, որ պետք է առավելագույնս պաշտպանելով ժողովրդավարության ցուցիչ հանդիսացող ընդհանուր տեղեկատվության ազատությունը՝ նվազագույն վնաս հասցնել դրա իրավաչափ սահմանափակմամբ պաշտպանվող արժեքներին:

Օգտագործված գրականության ցանկ

Դոյդոյան, Շ., Աբրահամյան, Գ. (2009) *Տեղեկատվության ազատություն և հանրային կապեր*, Ինֆորմացիայի ազատության կենտրոն, Երևան:

Եվրոպական դատարանի վճիռ, *Երուսաղեմն ընդդեմ Ավստրիայի*, 27.02.2001թ.

Եվրոպական դատարանի վճիռ, *Դիչանդն ու ուրիշներն ընդդեմ Ավստրիայի*, 26.02.2002թ.:

Եվրոպական դատարանի վճիռ, *Օրզերվերն ու Գուարդիանն ընդդեմ Միացյալ Թագավորության*, 26.11.1991թ.:

Մուրադյան, Մ., Ղամբարյան, Ա. և այլք (2018) *Պետության և իրավունքի տեսություն:* Ուսումնական ձեռնարկ, 3-րդ լրամշակված հրատ., «Լուսաբաց» հրատարակչատուն, Երևան:

ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-997 որոշում, 15.11.2011թ.: ՀՀՊՏ 2011.11.30/64(867) Հոդ.1586

ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-278 որոշում, 11.01.2001թ.: ՀՀՍԴՏ 2002/1

Малько, А.В. (2011). *Стимулы и ограничения в праве: Теоретико-информационный аспект,* 3-е изд., перераб. и доп.

Alexander, L. (2005). *Is There a Right of Freedom of Expression?* Published in the United States of America by Cambridge University Press, New York.

Bychawska-Siniarska, D. (2017) *Protecting the right to freedom of expression under the European convention on human rights*, Council of Europe.

Center for democracy & technology, *Regardless of frontiers: The international right to freedom of expression in the digital age.* Version 0.5 – Discussion Draft, Washington, DC, April, 2011.

Martens, C. (1991). *The observer and The Guardian v. United Kingdom.* (Violation of freedom of expression), Partly Dissenting Opinion Series A, No 216, Application No. 13585/88.

Mendel, T. (2003). *Freedom of Information: A Comparative Legal Survey, UNESCO, Regional Bureau for Communication and Information.* New Delhi,. https://bit.ly/2EKnyos

Richard, M. (2000). *The constitutional protection of freedom of expression.* University of Toronto Incorporated. Toronto, Canada.

References

Doydoyan, Sh., Abrahamyan, G. (2009). *Teghekatvowt'yan azatowt'yown ev hanrayin kaper* [Freedom of information and public relations], Informaciayi azatowt'yan kentron, Yerevan. (In Arm.)

Yevropakan datarani vchirr [Judgment of the European Court], *Yerusaghemn ynddem Avstriayi, 27.02.2001t'.* (In Arm.)

Yevropakan datarani vchirr [Judgment of the European Court], *Dich'andn u urishnern ynddem Avstriayi, 26.02.2002t'.* (In Arm.)

Yevropakan datarani vchirr [Judgment of the European Court], *Obzervern u Guardiann ynddem Miats'yal T'agavorut'yan,* 26.11.1991t'. (In Arm.)

Muradyan, M., Ghambaryan, A. yev aylk' (2018). *Petut'yan yev iravunk'i tesut'yun* [Theory of the state and law]: Usumnakan dzerrnark, 3-rd lramshakvats hrat., «Lusabats'» hratarakch'atun, Yerevan. (In Arm.)

HH Sahmanadrakan datarani t'iv SDO-997 voroshum [Decision of the Constitutional Court], 15.11.2011t'. (In Arm.)

HH Sahmanadrakan datarani t'iv SDO-278 voroshum [Decision of the Constitutional Court], 11.01.2001t'. (In Arm.)

Malko, A.V. (2011). *Stimuly i ogranicheniya v prave: teoretiko-informatsionnyy aspect* [Incentives and restrictions in law: information-theoretic aspect], 3-e izd., pererab. i dop. (In Rus.)

Alexander, L. (2005). *Is There a Right of Freedom of Expression?* Published in the United States of America by Cambridge University Press, New York. (In Eng.)

Bychawska-Siniarska, D. (2017). *Protecting the right to freedom of expression under the European convention on human rights.* Council of Europe. (In Eng.)

Center for democracy & technology, *Regardless of frontiers: The international right to freedom of expression in the digital age.* Version 0.5 – Discussion Draft, Washington, DC, April, 2011. (In Eng.)

Martens, C. (1991). *The observer and The Guardian v. United Kingdom.* (Violation of freedom of expression), Partly Dissenting Opinion Series A, No 216, Application No. 13585/88. (In Eng.)

Mendel, T. (2003). *Freedom of Information: A Comparative Legal Survey, UNESCO, Regional Bureau for Communication and Information.* New Delhi,. https://bit.ly/2EKnyos (In Eng.)

Richard, M. (2000). *The constitutional protection of freedom of expression.* University of Toronto Incorporated. Toronto, Canada. (In Eng.)

Эдгар Аветисян
Аспирант кафедры права Европейского Университета Армении
Эл. адрес: edgaravetisyan96@gmail.com

КОНСТИТУЦИОННЫЕ ГАРАНТИИ И ОСОБЕННОСТИ ОБЩЕЙ СВОБОДЫ ИНФОРМАЦИИ

Наряду с вызовами современного мира спрос на информацию и объемы ее оборота с каждым днем увеличиваются, что обуславливает настоятельную необходимость давать надлежащую правовую оценку правоотношениям, возникающим вокруг этого права. Общая свобода информации определяется как свобода искать, получать и распространять информацию с помощью любых средств информации, что является частью основного права на свободу

выражения мнений.

В проведенном нами исследовании были рассмотрены место и роль свободы общей информации, конституционно-правовые гарантии ее обеспечения в Армении, а также поставлены некоторые вопросы, касающиеся особенностей и ограничений этого права. В ходе исследования были выдвинуты подходы, интерпретации и предложения, направленные на обеспечение и защиту свободы общей информации, являющейся частью основного права на свободу информации.

Ключевые слова: Конституция, общая свобода информации, право, информация, выражение мнения, факт, гарантия, признак, ограничение права.

Edgar Avetisyan
Ph.D. student at the Law Department,
European University of Armenia
Email: edgaravetisyan96@gmail.com

CONSTITUTIONAL GUARANTEES AND FEATURES OF GENERAL FREEDOM OF INFORMATION

Along with the challenges of the modern world, the demand for information and the volume of its circulation are increasing day by day, which causes the imperative to give a proper legal assessment to the legal relations arising around this right. General freedom of information is defined as the freedom to seek, receive and impart information through any media, which is part of the fundamental right of freedom of expression.

The study carried out by us addressed the place and role of freedom of general information, the Armenian constitutional and legal guarantees of its provision, and also presented some questions regarding the features and limitations of this right. Approaches, interpretations and proposals were put forward with the research, which aimed to ensure and protect the freedom of general information, which is part of the basic right to freedom of information.

Keywords: Constitution, general freedom of information, right, information, expression of opinion, fact, guarantee, feature, limitation of right.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2022թ. նոյեմբերի 15-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2022թ. նոյեմբերի 21-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2022թ. նոյեմբերի 26-ին: